

ՔՍԱՆԻՆԵՐՈՐԴ ՏՍՐԻ



Տարեկան գինը 10 ռուբլի կէս տարւան 6 ռուբլի... Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ». Կամ Tiflis, Rédaction «Mschak». Տ է Լ Ե Ֆ Օ Ն № 259.

Եւրոպայում թիւերը բաց է առաւօտեան 10—2 ժամ (քաղի կիրակի եւ առօրեային):

Յայտարարութիւնը ընդունւում է ամեն լիցւում:

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկով. Տ է Լ Ե Ֆ Օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Եզոր Բոսնիայի եւ Թագուհի Բուլղարիան Միջազգային Կոնգրեսները արտի յաւով յայտնում են ազգակիցներին եւ ծանօթներին իրանց սիրելի աղկայ:

Ե Ղ Ի Ս Ա Բ Է Թ Մ Ի Ր Զ Ա Բ Է Կ Ե Ա Ն Յ Ի

վաղածամ մանր, որ տեղի ունեցաւ օգոստոսի 7-ին Արասթումանում: 1—1

ԲՈՎԱՆԻԿԱԿՈՒԹԻՒՆ

Կովկասեան Չինաստան.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գաւառական պատեր. Նամակ Եւրոպայի. Նամակ Ասիայի. Նամակ Վաղարշապատի. Նամակ Նոր-Բայազետի. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արասթի լուրեր.—ԽԱՆՆ ԼՈՒՐԻՆ. Թուրքի կողմից.—ՀԵՌԱՔԻՐԻՆ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՉԻՆԱՍՏԱՆ

Մեր ընթերցողներին յայտնի է, որ Սե Ծովի մաս, Բաթումի շրջակայքում, մեծ զիջքով փորձեր արվեցին բուսական չինական թէյի տունկեր եւ ստանալու թէյ: Փորձերը աղող արդիւնք տուին, թէյը հաւանութիւն գտաւ վաճառանոցում եւ ծախվեց հիշատակեալ Պարզից, որ Կովկասում թէյի մշակութիւնը կարող է արդողութիւն ունենալ:

Ցանկանալով խրատուել եւ պաշտպանել այդ նոր մշակութիւնը, կառավարութիւնը օրէնսդրական ձևով որոշեց պատել Կովկասեան թէյը այն ծանր մաքսից, որ զրկում է արտասահմանից եկող թէյի վրա եւ արհեստական կերպով թանկացնում է օտար թէյի գինը: Կովկասեան թէյի մշակողները ազատ լինելով մաքսից, կարողութիւն են ստանում աւելի վառահ կերպով ծախքեր անելու այդ նոր բոյսի վրա եւ աշխատելու, որ այդ նոր շահաւէտ բոյսը հաստատ կերպով հիմք բռնի մեր երկրում եւ դառնայ նրա արդիւնագործական ճիւղերից մէկը:

Այդ բաւական չէ: Նշանակված են յատուկ մասնագէտներ, որոնք պէտք է ձրիաբար արձակեն թէյի մշակողներին, տան նրանց պատշաճաւոր խորհուրդներ, օգնեն կազմակերպելու գործը կանոնաւոր հիմքերի վրա եւ պարբերաբար գեղեցանեն երկրագործութեան միջնորդութեանը այն կարծիքներին եւ պահանջներին մասին, որոնք կարօտ են պետութեան արձակութեան:

Պէտք է նկատել, որ թէյի մշակութիւնը, բացի մի որոշ հմտութիւնից, որ ձեռք է բերվում գործնական ուսումնասիրութեամբ, պահանջում է առհասարակ մեծ աշխատանք, ուստի աւելի աճող եւ շահաւէտ կերպով կարող է զարգանալ այն ժամանակ, երբ նա կրկին գիւղացիներին եւ փոքր ագարակատէրերին ձեռքը: Գիւղական ընտանիքը իր միացած ոյժով միշտ աւելի ձեռնաու է գործում, քան խոշոր կալուածատէրը վարձկան հրփերով: Այլ քան առաջ ունենալով այդ հմտութեամբը, պէտք է ցանկանալ, որ այդ նոր մշակութիւնը որին վիճակված է զարգանալ մեր երկրի որոշ մասերում, դառնայ գիւղական մեծամասնութեան սեփականութիւն, տալով նրան աշխատանքի նոր պղծելու եւ մատա՛ արարելով երկրին եւ պետութեան մի արդիւնք, որի համար ազգաբնակչութիւնը պէտք է վճարէր իր դրամական միջոցների մի մասը ուրիշ երկրներին:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԱՒԱՌԱԿԱՆ ՊԱՏԿԻՐ

(Նամակ Նուրից)

Մեր քաղաքում կարելի է չը յուսահատվել միայն ձմեռը: Ձմեռը գոնէ ձիւնի սպիտակ սա-

ւանը ծածկում է գետինը եւ մարդու աչքին միմիայն խորտուրտութիւններն են երեւում, իսկ այժմ, ամառը կիցտոտութիւնները ու գարշահոտութիւնները քաղաքի փողոցների անբաժան մասն են կազմում: Մտածեցէք եթէ ոչ յարմարութիւնների՝ գոնէ ձեր անողութեան մասին: Օղը լցվում է ներված քաղաքից, մասնաւոր քաղաքում գործարդութիւններով, մետաքսէ թել պատրաստող գործարաններով:

Անցէք որ փողոցով էլ կաննաք: Տեսնում էք՝ ջրի մի անգուստ հոսանք դէպի ներքեւ է վազում, բազմաթիւ ակօսներ փորելով այդ երթուհեկաշատ փողոցով, կամ մի այլ տեղ ջուրը լնացած ամբողջ փողոցն է բռնել: Պարտէզներ ջրելու համար են տանում այդ ջուրը: Եւրոպայում մեծ էք կանգնած եւ անցնելու համար ցամաք էք օրնում: Մինչ այդ, մէկ էլ տեսաք մի կառք սրբնթաց եկաւ անցաւ. եւ անհրեւերի տակից դուրս ցայտած ցեխի շիթերը տողեցին ջորերդ: Դէմքերից վրա դժգոհութեան եւ զգուշանքի եւ ծանաճութեան էք անում եւ բարկացած մտնում ջուրը ու անցնում:

Ամենաբանուկ ճանապարհի վրա էք այժմ Այստեղ տեսարանը փոխվում է: Ահա մի կառք է գալիս: Ի՞նչ սկսում էք նախապատրաստվել գալիք փորձանքը աջողութեամբ տանելու համար: Կառքի անհրեւերը, խրվելով 2—3 վերջիկ հաստութեամբ հողի մէջ, փոշու ակօսեր են բարձրացնում իրանց ետեւից եւ ծածկում անցնողին: Մի քանի րօպէից յետոյ քայլում է փոշին եւ դուք տեսնում էք սպիտակազած մազերով ու հողուտով մարդուն կրկին զգուշանքով աչքերը փակած ճանապարհը շարունակելու:

Բայց կրիտիկական եւ սրտաշարժ է լինում նուրիցու դրութիւնը մասնաւոր գարնանային ժամանակները կամ անձրեւային օրերը: Տարի չէ անցնում, որ պարբերական թերթերում լոյս չը տեսնեն լուրեր Նուրի երկու կողմերից: Դուրս-Չայի եւ Կոստանի աւերումների մասին, Նոյնը կրկնվեց եւ օտ օրերս:

Անձրեւային օր է. տեսնում էք անա մարդկանց խմբեր գէպի Դուրս-Չայի եւ վազում: Ետպալում էք նրանց հետ եւ դուք եւ ձեր առաջը բացվում են աղետալի տեսարաններ: Մի տեղ կեղեկան անկող գոչումներով առաջ է սլանում, տանելով իր հետ ահագին ծառեր, սատակձ կովեր, թամբած ձիեր, աւերած տան վերջին մնացորդներ... Մի այլ տեղ նա մտել է արդէն կանաչազարդ այգիները եւ ամեն մի բայս դէպի իր ուղղութիւնը խնարհեցրել, այգին սամայացրել. մի տեղ մարդիկ այնտեղ են ջրի ճրաններով զանազան իրեր ազատել, մի այլ տեղ օտաբարիկ կանայք եւ երեխաներ ձեռնալ կամար փայտ են օրնում... Եւ այս բոլորի վրա նուրիցի կրկն, որի սեփականութեանը միտա է հասել, օտնեղ ձեռնելով ողբում է, իսկ առաջնայից ազատ մնացածները, գետի ափին ահագին խմբերով ժողոված, հրճվում են ջրի շարածճիւթեամբ... Այդ ստիճան միմիայն ոչ բանական արարածները կարող են անտարբեր գտնվել... Հրաբխում ենք քաղաքայինների եւ մասնաւոր քաղաքային վարչութեան ուշադրութիւնը այս դառն երեւոյթների վրա:

Կ. Մ.

ՆԱՄԱԿ ԸՈՒՇՈՒՑ

Յուլիսի 25-ին

Ահա մի ամսից աւել է, որ այստեղ ներկայացումներ է տալիս Բագուի խմբի մի մասը:

բայց աղողութիւն չէ ունենում ոչ մուտքի կողմից եւ ոչ էլ խողի: Դերասանները հասարակութիւնն են մեղադրում անտարբերութեան մէջ, իսկ հասարակութիւնը՝ դերասաններին: Ըստ մեզ, հասարակութիւնը այնքան էլ մեղաւոր չէ: Խմբի մէջ միայն Պետրոսեանն է, որ լաւ է խաղում: Օր. Վարդիթերը խաղում է բաւարար, ու Փառանձեմը վերաբերվում է գործին բարեխիղճ կերպով. պ. Չարիֆեանի արժանաւորութիւնը նրանումն է կայանում, որ գեղեցիկ յոյսեր է տալիս, եւ հաւանական է, որ մտակ ապագայում մեր լաւ դերասաններից մէկը լինի: Խաղում է բաւարար Ափսոս միայն, որ հայոց դերասանական խումբը լաւ չլոյս չէ կարող լինել մի նոր սկսող դերասանի համար: Մնացած դերասանները թէլեզուրիկ չեն ընդունակութիւնից, իսկ մի կրկնուր նոյն իսկ ձիւրքից, սակայն այդ մարդիկ մի կողմ չարած իրանց ընդունակութիւնները, կարծես վճռել են խեղճ հայոց բեմը դարձնել մի ցերիկ հայ հասարակութեան առանց այն էլ կոպիտ ճաշկը աւելի եւս կոպտացնելու համար: Երեւակայն անգամ չէ կարելի ուրիշ բեմեր վրա այն, ինչ որ կատարվում է մեղանում: Որ եւ կօմիդիա կամ ֆարս ներկայացնելիս, որ եւ կօմիկական դեր խաղալիս, մեր դերասանները չեն մտածում կօմիկական տիպը ինչպէս հարկն է մարմնացնելու, որպէս զի հանդիսատեսը այնուհետեւ ինքնաբերաբար սկսի ծիծաղել նրանով: Ընդհակառակը՝ նրանք չիտթելով իրար հետ ծիծաղել եւ կօմիկականը եւ իրանց խաղի նպատակ դարձնելով այն, ինչ որ իսկապէս միայն հետեւանքը պիտի լինէր, աշխատում են ամեն տեսակ ներելի եւ աններելի, տեղի եւ անտեղի շարժումներով, գոռում գոչումով, մի խօսքով՝ գոռով, արհեստական կերպով՝ ծիծաղ յարուցանել, կարծելով, թէ դրանով ներկայացում են տալիս ճշմարտեական դաղտիք՝ պիէտում օր. Մարի Հրանդը այնքան ոգեւորվել էր, որ քիչ էր մնացել մի հակապական օտարնով ցատկէր իր սերահարի ուսերը, բայց այդ բանը, ի մեծ դժբախտութիւնը գալիքից հասարակութեան, նրան չաջողվեց:

Սակայն մինչեւ հիմա եղածները նսնմանում են երէկվայ տուած ներկայացման առաջ: Օր. Մարի Հրանդը իր բնեկեղծ ընտրել էր «Տէլեֆօնի օրերը» անունով պիէտը, որ վայել էր զուշէ մի կաֆիւ-չանտանի կամ բալետանի, բայց հայոց բեմին յամենայն դէպս վայել չէ: Օրիորդը կարող է առարկել, թէ դա մի պիէտ է, որ ներկայացնում են Պարիզի նման քաղաքներում: Գուցէ: Բայց դա ոչինչ չէ նշանակում: Արեւին նմանիկ ուղեւիս պէտք է լոյսին նայել եւ ոչ թէ բօնիքին:

Թէ որպիսի տպագրութիւն թողցն այդ պիէտը հանդիսականների վրա, կարելի է եզրակացնել նրանից, որ ներկայացման ժամանակ շատերը դուրս էին գալիս դաժիւրից եւ լսվում էին սուրճանի Պէտք էր տեսնել, թէ ինչ ծայրայեղութեան էր ասցնում պ. Արաքսեան, տխրահալով պիէտի թարգմանիչը: Չը բաւականանալով բերանայի արտաբերած ծայրայեղ ցինիկ խօսքերով, նա այդ խօսքերը համեմատ էր եւ այնպիսի անվայել շարժումներով, որ մարդ չը գիտէր ամօթից ուր նայի: Պէտք էր տեսնել այդ րօպէներին դեռահաս օրիորդների կարմրած ու շառագունած դէմքերը, որպէս զի հասկանալի լինէր, թէ ինչ արբազանութիւն էին գործում պ. Արաքսեան եւ նրա ընկերները:

Ինչպէս տեսնում էք, լաւ բանը կարելի է շատ վառ գործ դնել: Ահա եւ մի ուրիշ օրինակ: Այստեղ, 14—15 տարեկան օրիորդները ու պատանիները արդէն կարող են ու խօսում են Դարվիւնից ու Մարքսից, Եւրօպիայից ու Բայրօնից: Եւ այդպէս նրանք օրն ի բուն ժամավաճառ են լինում, իսկ մայրերն իրենք ինքն ու գրականութիւնը մնում են առանց ուսումնասիրվելու: Հայերես բանն է այդպէս՝ մեծից մինչեւ փոքրը: Բուզմանների ու հօտենտոտների մասին աւելի լաւ գաղա-

փար ունենք, քան մեր հայրենի Չանգեղուրի մասին: Խեղճ Չանգեղուր, նա խորխափում է խաւարի ճանկերում տարրական գիտելիքներից զուրկ լինելու պատճառով, իսկ մերքեք Եւրօպիայից ու Բայրօնից չեն ուղում ձեռք քաշել: Մինչդեռ որքան մեծ բարիք հասցրած կը լինէին մեր՝ թէկուզ հենց աշակերտներն ու աշակերտուհիները, եթէ նրանք, ծանօթանալով մեր գրականութեան հետ, ծանօթացնէին նրա հետ նաեւ ժողովրդին: Մեր գաւառներից ամենայեւորակարճ անկանաճ Դարբաղն է: Մինչդեռ Արարատեան դաշտում, Շիրակում, Լոռում ընթերցանութիւնը բաւական տարածված է եւ բազմաթիւ գիւղեր նոյն իսկ լրագիր են ստանում, Դարբաղում միայն եզակի գիւղեր կան, որոնք գրքի կամ լրագրի երես են տեսնում: Եւ դա շատ հասկանալի է: Երևանի ինտելիգենցիան կապ է պահպանում գիւղերի հետ եւ քիչ չէ պատանում, որ Երևանի աշակերտը հայրենի գիւղ վերադառնալիս, իր հետ տանէր եւ ընթերցանութեան գրքեր գիւղացիների համար: Ո՛ր է այդպէսի բան Դարբաղում: Երևանի ուսանող սերունդին համար իրաւ չեն տալիս Մարքսի եւ Դարվիւնի թէօրիաները, որպէս զի նա էլ այդպիսի օգտակար բաներով զրաղի:

Ցանկալի կը լինէր, որ ինքնակրթութեամբ զբաղվող մեր օրիորդներն ու պատանիները, նախ քան Եւրօպիայի կամ Դարվիւնի ձեռք առնելը, ուսումնասիրէին աւելի տարրական բաները, որպէս զի կրթութիւնը սխտանապահ կան լինի եւ օգտակար եւ որպէս զի այդ կրթութիւնը վերջ ի վերջոյ մի բանի պէտք դալ կամ իրանց, կամ հասարակութեան համար:

Ա. Ա.

ՆԱՄԱԿ ԱՍՈՒՐԱԴԻՑ

Յուլիսի 30-ին

Բաղաբիս «Հայ-Լուսաւորչական Կանանց Բարեգործական Ընկերութեան» մասին զանազան ժամանակներում լոյս տեսան մեր մամուլի մէջ կցկաւոր տեղեկութիւններ, երբեմն նպատաւոր, երբեմն աննպատաւ, շատ անգամ նոյն իսկ ծայրական ու հեղեղական. սակայն մինչեւ այսօր չը գտնվեց մէկը, որ այդ ընկերութեան մասին մի լուրջ, անփոփ եւ անկողմնապահ յօդուածով գաղափար տար ընթերցողին, թէ իսկապէս ինչ ընկերութիւն է այդ, ովքեր են դրա հիմնադիրները, ինչ հանգամանքներ պատճառ եղան մեր տիկիներին յղանալ մի այդպիսի գեղեցիկ եւ օգտակար միտք եւ վերջապէս ինչ է ընկերութեան նպատակը:

Մասնից չորս տարի առաջ Ասիաբաղում մի քանի երիտասարդներ, տանուտէր պ. Աղա-տեանցի նախաձեռնութեամբ եւ տեղական օտարականական իշխանութեան թոյլտուութեամբ, հիմնեցին «աղաքատանամ հոգաբարձութիւն» անունով մի մասնաւոր ընկերութիւն, մուրացկանութիւնը հայերի միջից վերացնելու նպատակով: Ընթացիկ հոգաբարձուներ, զանազապահ, գործող անդամներ եւ այլն եւ մի առ ժամանակ գործը կանօնաւոր առաջ գնաց, փողոցներում այլ եւս հայ մուրացկանների չէինք հանդիպում. սակայն հետզհետէ գործը սկսեց կաղալ, գործողները թուլացան եւ ամեն ոք, իր հայեցողութեան եւ քմբի համաձայն, եւ ժողովում, եւ բաժնետու էր, առանց որ եւ է հաշի ու կանօնի վերջապէս, համարեա ամենքն էլ յոգնեցին, բաւական համարեցին իրանց արդիւնաւոր գործունէութիւնը եւ հետագան ապարելից. ներկայումս այդ ընկերութեան միակ ներկայացուցիչը պ. տանուտէրն է, եւ ոչ ոք չը գիտէ, թէ ինչ է անում, կամ աւելի ճիշտն ասած՝ ոչինչ էլ չէ անում: Եւ անհ, տղամարդկանց այդ անաղողութիւնը կամ անընդունակութիւնը, ինչպէս կամենաք ընդունեցէք, բարեգործական ապարելում չարժեք տիկիները բարի նախանձը եւ անցեալ տարվայ վերջում մի քանի կանայք լճանցին հիմնել Ասիաբաղում «Հայ Կանանց Բարեգոր-

ժական Ընկերութիւնն: Գործի նախաձեռնողներ հանդիսացան տ. Շ. Մամիկոնեանց եւ դերասանուհի տ. Ազնիւ: Տ. Ազնիւր եւ պ. Անդրանիկը այդ նպատակով տուեցին մի ներկայացում, որից զոյացած արգիւնքով, 100 բուրջ աւելի, գրվեց ընկերութեան ֆոնդի սկիզբը. բայց հայի նախանձը եւ ապերախութիւնը երբ էլ յետ մնացել բարի գործից, այդ ներկայացումից անմիջապէս յետոյ տեղիս երիտասարդները մի լրագրի մէջ անուանարկեցին եւ վերաբերեցին ազնիւ դերասաններին, անուանելով նրանց «ան-եասա չապիկ»... Սակայն բարի սերմը ձգված էր պարարտ հողի մէջ. տ. Ազնիւից յետոյ տ. Մամիկոնեանցին օգնութեան հասան տիրուհի Ս. Աղբալեանց, տ. ա. Սափարեանց եւ Յակովբեանց, որոնք անգուց ջանքերով եւ յոյժովեց, պատշաճաւոր թոյլտուութեամբ, ներկայ տարվայ մարտ ամսի մէկին պաշտօնապէս բացված յայտարարել Աստաբաղի Հայ Կանանց Բարեգործական Ընկերութիւնը:

Կարճ միջոցում, միմիայն Աստաբաղում, ընկերութիւնն ունեցաւ մօտ 50 անդամուհիներ Եւսկան րուբի անդամավարով: Առաջին ընդհանուր ժողովում, որ տեղի ունեցաւ նոյն մարտ ամսի 3-ին, անդամուհիները միաձայն ընկերութեան նախագահ ընտրեցին գործի նախաձեռնող տ. Մամիկոնեանցին, սրան օգնական տ. Սափարեանցին եւ գանձապահ տիրուհի Աղբալեանցին, որոնք եւ ներկայումս այդ բարի գործին կենդանութիւն եւ շունչ տուողներն են. նոյն ժողովում պատուաւոր հոգաբարձու ընտրվեց Վեհափառ Կաթողիկոսը եւ պատուաւոր անդամներ—երկրիս նախկին կառավարիչ գեներալ Կորոզպետի եւ այդ ժամանակվայ կառավարիչ գեներալ Բոգոլիբովի, որ եւ թոյլատրել է ընկերութեան բացումը:

Ընկերութեան բացումը տեղական լրագրերում յայտարարվելուց անմիջապէս յետոյ ստացվեցին զանազան անձինքներից նուէրներ մօտ 200 բ.: Այդ ժամանակ մեզ մօտ հիւրեր եղող երգիչ պ. Ջանբաբեանցը ընկերութեան խնդրանքով մի կօնցերա տուեց, որից ընկերութիւնը ստացաւ աւելի քան 150 բ. զուտ արգիւնք: Այս զէպէն էլ զուր չեկաւ տեղիս մի քանի պարուհիներին, որոնք ամեն կերպ աշխատեցին խանգարել բարեգործի եւ ազնիւ երգիչ գովելի մտադրութիւնը. սակայն անաշուղտութեան հանդիպելով, կրկին դիմեցին իրանց ոչ պատուաւոր միջոցին—զրպարտեցին եւ անուանարկեցին պարուհի լրագրութեան մէջ: Ի զէպ. պէտք է ասել, որ պ. Ջանբաբեանցի Աստաբաղում աված երեք կօնցերաներն էլ աջող են անցել, որոնցից երկրորդը տրվել է ուսու հասարակութեան խնդրանքով, իսկ երրորդը բարեգործական ընկերութեան խնդրանքով:

Այս բոլորից, երեւի, ընթերցողի ուշադրութիւնն աւելի գրաւեց մի հանգամանք, որ շատ բնորոշ է. այն, որ մի քանի պարուհիներ, փոխանակ աջակցելու եւ օգնելու իրանց մայրերի եւ քորերի բարի գործին, ընդհակառակը՝ աշխատում են վնասել եւ խանգարել: Այն, զրժբաղաբար ստիպված ենք ցատկով արձանագրել այս տխուր եւ պարսակելի իրողութիւնը: Այսքանից յետոյ երկու եւ լրագրութեան մէջ հրատարակուեցին գոչել, որ «350 հայ ընտանիք ունեցող Աստաբաղում չը գտնվեց մի կին, որ մասնակցէր երիտասարդների տրվելիք ներկայացմանը եւ որ մեզանում տիկիները ընդհանրապէս զբաղված են միմիայն բամբակաբուծութեամբ, աւելի քան զարմանալի է. ընթերցողի արդէն ձանաչեց բամբակոյ զամբաստէրին:

Կանանց Բարեգործական Ընկերութիւնը, ընդամենը 5—6 ամսվայ ընթացքում, իր սկզբնական ծախքերը հոգալուց, մօտ 150 բ. տեղիս չքաւոր ընտանիքներին անուշը եւ հագուստ մատակարարելուց եւ զանազան անձանց ձանապարհածակներ տալուց ու Ախալքալաքի վնասվածներին 50 բ. ուղարկելուց յետոյ, ներկայումս ունի մօտաւորապէս 700 բուրձխալի մի համեստ գումար, որի փոքր ինչ մնձմանալուց եւ ընկերութեան գործերի էլ աւելի կանօնաւորվուց յետոյ, վարչութիւնը մտադիր է աւելի ընդլայնել իր գործունէութեան շրջանը: Ընկերութեան ներկայ վարչութիւնը, որ ընտրված է երեք տարով, մտադիր է, բայց տեղական չքաւորներին անուշը, հագուստ, ընտանիքների վարճ մատակարարելուց, միջոց տալ նրանց զանազան կրթիչ տեղական դպրոցներում, մօտ ապագայում բանալ մի մանկական պարտէզ եւ, եթէ ընկերութեան գործն աւելի աջող ընթանայ, բանալ նաեւ մի արհեստագիտական դպրոց:

Բոլոր սրտով ցանկանում ենք կատարել

աջողութիւնը թող մեր ներկայ յօդուածը իրի իբրեւ մի կոչ մեր ամենուրեք սփռված հայ եղբայրների եւ քորերի համար եւ թող բարեպաշտ պարուհիներն ու տիկիները շտապեն ուղարկել իրանց կամուսուր նուէրները այս մի բուռն եռանդով եւ բարեփրա հայ կանանց, որոնք Անդրկասպեան երկրի հրատապ երկնակամարի տակ փոքրիկ գովութիւն եւ հանօք գտնում են միայն իրանց սկսած բարի գործի աջողութեան մէջ: Յուսանք եւ սպասենք:

Հայ

ՆԱՄԱԿ ՎԱՂԱՐՇԱՊԱՍԻՑ

Յուլիսի 31-ին
Յուլիսի 31-ին, տեղիս ս. Աստուածածին եկեղեցում, գործակալ Սարգիս քահանայ Առաջնեանցի հրաւերով, նշանակուած էր ծխականների ժողով ընտրելու նոյն եկեղեցու համար նոր երէցփոխ. բայց ծխականների անհամաձայն թիւը ներկայ չը լինելու պատճառով ընտրութիւնը յետաձգվեց եւ կայացաւ հետեւեալ կերպով, յուլիսի 15-ին, մասնակցութեամբ 256 ծխականների: Որովհետեւ այժմեան երէցփոխ պ. Ա. Օհանջանեանց այդ օրվայ ժողովին ներկայացնելու համար պատրաստել էր անցեալ 1900 թ-ի եւ ներկայ 1901 թ-ի վեցամսեալ եւ իր եռամսայ երէցփոխութեան ընդհանուր հաշիւները, ուստի գործակալն առաջարկեց ծխականներին նախ յսել երէցփոխի հաշիւները եւ պ. Ա. հաշիւները գեներալը նոյն հաշիւների առիթով եւ ապա միայն ձեռնարկել ընտրութեանը: Միակամեանքը համարեա միաձայն ընտրեցին երէցփոխի հաշիւները եւ որպէս չը նորակարգութիւն՝ առաջարկեցին նորից վերընտրել պ. Ա. Օհանջանեանցին: Սակայն գործակալը յայտնեց, որ պ. Օհանջանեանց զբաւոր յայտարարութեամբ հրատարակել է նորից վերընտրվելուց, բայց ծխականները՝ շուրջ երէցփոխ չենք ուղղում, միմիայն Օհանջանեանցին ենք ուղղում կրկին ընտրելու մօտ 10 բուլէ եւ պ. Օհանջանեանց ստիպված եղաւ զիջանել եւ համաձայնվել քուէարկվելուց: Օհանջանեանց համարվում էր երիտասարդների, արհեստաւորների, երկրագործների եւ չքաւորների թիկնածու, իսկ աղաների եւ հարուստների թիկնածուները հրատարակեցին Օհանջանեանցի հետ միասին քուէարկվելու: Օհանջանեանցի հետ միասին առաջարկեցին հետեւեալ թիկնածուները՝ պ. պ. Ե. Սուքիասեան, Գ. Լուսարարեան եւ Զ. Խոչոյեան, որոնք թէեւ հրատարակեցին, բայց ծխականները չընտրեցին եւ համոզեցին քուէարկվել: Գաղտնի քուէարկութեամբ, փակ տոմսերով, պ. Ա. Օհանջանեանց ստացաւ 241 ընտրողական ձայն, պ. պ. Ե. Սուքիասեան 4 ձայն, Զ. Խոչոյեան 2, իսկ Գ. Լուսարարեան ոչ մի ձայն: Եւ այսպէս պ. Օհանջանեանց կրկին վերընտրվեց երէցփոխ:

Բացի ընտրութեան աջող ելքից, այս ժողովը հետաքրքրական էր եւ մի այլ կողմով, որ առաջինն է Վաղարշապատում, եւ եթէ չենք սխալվում, նոյն իսկ ամբողջ Կովկասում.— ժողովին մասնակցողներից 106 հօդի անգրագէտ գիւղացիներ էին, որոնց համար երբ առաջարկվեցին գրագէտներ ընտրել նրանց թիկնածուներին անունները գրելու, նրանք հրատարակեցին եւ հրատարակում առաջարկեցին իրանց թիկնածուներ անունները: Աղաները ուրախացան, յոյ ունենալով, որ անգրագէտները, որպէս գիւղական չքաւոր զատակարգին պատկանող անձինք, կը հրատարակեն Օհանջանեանցին վերընտրելուց, բայց 106 անգրագէտների մէջ չը գտնվեց մէկը, որ հակառակ լինէր Օհանջանեանցի վերընտրվելուն:

Մի երկու խօսք էլ պ. Ա. Օհանջանեանցի եռամսայ գործունէութեան մասին: Դեռ երեք տարի արանից առաջ, երբ առաջին անգամ զրկեց պ. Ա. Օհանջանեանցի թիկնածութիւնը, աղաները միջոց կէս էին լինում խանգարելու թէ ընտրութիւնը եւ թէ ընտրութեան հաստատութիւնը, որովհետեւ՝ 1) եկեղեցին ունէր 7—8 հազար բուրձի զբաղաւորւել, որ շարունակ գտնվել էր աղա-հարուստների ձեռքում, իսկ Օհանջանեանց, լինելով ժողովրդի մարդ, չէր թողնի հարուստներին այդ զբաղաւորվելու օգտվելու, 2) եկեղեցին ունէր կտակված եւ այլ գումարներ, որոնք գտնվում էին զանազան մարդկանց ձեռքում որպէս աւանդ, որպէս զի գործարկվէին եկեղեցու զանազան անուն շինութեան վրա եւ որոնք պահանջման 10 տարվայ ժամանակամիջոցը լրանալու վրա էր, եւ 3) Օհանջանեանցի գործունէութեամբ յայտնի կը դառնար իրանց անօգուտ երէցփոխութիւնը: Եւ յիշուի, այսպէս էլ եղաւ. նա

երէցփոխանական պաշտօնն ստանձնելուն պէս նախ եւ առաջ սկսեց ընդարձակել եկեղեցու գաւիթը, ծառեր տնկելով թէ եկեղեցու գաւթում եւ թէ գերեզմանատան շուրջը, նորոգեց եկեղեցու գաւթի խարխուլ ու կրասքանչ պատերը, կանօնաւորեց եկեղեցու հաշիւաւորութիւնը, մուտքի փոխարէն անդորրապարտ տալով, իսկ ծախսի փոխարէն փաստաթղթեր ժողովելով, բողոքեց կօնստաւորայի դէմ եւ ըստացաւ սինօդից երէցփոխի իրաւունքները եկեղեցին վերանորոգելու, զանգաւատան շինութիւնը սկսելու եւ կտակած ու այլ գրամների պահանջը յայտնելու: Վերացրեց եկեղեցում գանձանակ ժողովելու հասանդ ժողովութիւնը եւ փոխարինեց նրան կամաւոր նուէրներով, եւ թէ դրամով եւ թէ բերքով, որի հիման վրա ծխականների նուէրած գործերը ամեն տարի բաժանվում է չքաւոր գիւղացիներին, որպէս սերմացու՝ իրանց արտերը ցանելու համար: Ստիպում ու ստանում է զանազան մարդկանց մօտ գտնված գրամների մէկ մասը, իսկ միւս մասին ժամանակ է որոշել վճարելու, եւ բացի այս, սկսել է զատ բաց անել այն կտակակաւարների դէմ, որոնք չեն ուղղում կտակած գումարը տալ զանգաւատունն աւարտելու համար կամենալով ազատել երկրագործ զատակարգը գործնի տարեկան բերքը կապալով վերցնող մարդկանց կամայականութիւնից եւ անխիղճ վարուցից, առաջարկեց գործնի բերքի կապալ վերցնել եկեղեցու օգտին, որից վախեցած կապալաւորները հրատարակեցին մասնակցել աճուրդին եւ վանքը ստիպված եղաւ իր կողմից կալաչափ նշանակել Վերջին միջոցից գոհ մնաց եւ վանքը, որ ընտրեցին ունեցաւ իր շտեմարանում, եւ զիւղայի երկրագործը, որ ազատվեց կապալաւորներից: 1898 եւ 1899 թուականներին, երբ անաշող բերքի պատճառով գործերը թանգացաւ եւ գիւղացին, զբաւ չունենալով գործն անելու, ստիպված էր վաշխառուներից զբաւ կամ գործն վերցնել, պ. Օհանջանեանցը իր երաշխաւորութեամբ վերցրեց իջմիմանիչ տեւմարանից փոխարինաբար աւելի քան 100 խաւվար գործն (խաւվարը 30 պուր) եւ բաժանեց 200—300 տուն գիւղացիների եւ այն եւ այն: Ահա թէ ինչպիսի Օհանջանեանցը դրաւ ծխականների սէրն ու համակրութիւնը:

Փ. Աղապարեանց

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ԲԱՅԱՂՇԻՑ

Յուլիսի 29-ին
Նոր-Բայաղէտից դէպի հարաւ 20 վերստ հեռաւորութեան վրա գտնվող Ջորի-գեղ (Վալի-Աղալի) գիւղը ենթարկվեց մի անսովոր, մի քանի տասնեակ տարիներից ի վեր չը տեսնված աղէտի, որ անագին հարուած տուեց, առանց այն էլ քայքայված, գիւղացու տնտեսական վիճակին: Յուլիսի 27-ին, երկուրեք օր անընդմիջ անապարհ հաստ չերոտեցով սկսեց ծածկվել ողջ երկնակամարը. տիրեց մի սոսկալի աղմուկ: Այդ դրութիւնը տեւեց մինչեւ ժամի 11-ը, որից յետոյ սկսվեց մի այնպիսի յորդառատ անձրեւ տեղում, որ 20 րոպէ չանցած սածենաչափ հեղեղը, գիւղի արեւմտեան զանգվարից հեռու, ամեն պատճառով իր սկսեց հեռը տանել դէպի լիճը: Փակագիւղի մէջ սեւեւ, որ գիւղը գտնվում Սեւանի լճից 1 1/2 վերստ հեռաւորութեան վրա, մի նեղ ձորակի մէջ, գեղաբնակեաց լեռների արեւելեան փէշի վրա, որ հեղեղ գոյնալու շատ նպաստաւոր դիրք է ներկայացնում:

Մինչդեռ գիւղի կանայք ու մարդիկ ահ ու դողով սպասում էին անձրեւի վերջանալուն, յանկարծ տեսան հեղեղը եւ նկատեցին, որ գոռերում գտնվող անասուններին կարող է վտանգ սպառնալ տանիքների խարխուլ լիւնելու պատճառով եւ ամեն մէկը նրանց իր անասունները եւ իր տան փոքրիկ շտակները հանել ձորակի գլուխը, որտեղ ապահով կարող էին լինել: Շատերի գոռերը քանդվեցին եւ երեխաներին երգիկներից էին հանում: Գրանց լաց ու կոծը, գոռում-գոչիւնը, հաւարի (օգնութեան) կանչը, անասունների բառաչիւնը, անողոք կայծակի հրափայլ չերտերը եւ անւրջնատ որոտումները միախառնվելով մի անհղ աղմուկ էին կազմում եւ օդը թնդացնում:

Ճիշտ աղբիւրից իմացալ, որ հեղեղը հետեւեալ վնասներն է տուել Հիմնայատակ են եղել եւ քլվել դէպի լիճը 15 տուն իրանց միջի կահ-կարասիներով, տարել ոչնչացրել է 400 սայլ խոտ, 100 սայլ գործն եւ գարի, 32 հատ դասարկ սայլ կալերի միջից եւ բազբից, 800 ծառ արմատահան է արել եւ քլել, աւազի պէս

ողողել տարել է 16 խաւվար (խաւվարը=30 պ.) գործն անբարի հորի միջից, որ պատկանում էր Նոր-Բայաղէտից Եփրեմ Կուռոյեանին: Զը հնձած արտերը ծածկվել են տիղմի հաստ չերտով, այնպէս որ հնձելը անհնար է: Իսկ հընձած եւ բարդացածները (բարդացած=30 խրճի) հօ քլել է, տարել: Տարել է նոյնպէս մի ջրաղաց հիմնովին: Բարեբաղդաբար, մարդկային կոտոր միայն երկու հատ է եղել. չը նայած գիւղերային մթութեան:

Գիւղերային գողերից գործն ու գարին պահպանելու համար ամեն մարդ քնում է իր կալում, մեծ մասամբ բացօդայ: Այդ գիւղեր կալերում քնողները, իմանալով, որ անձրեւ պիտի գայ, հեռացել էին կալերից, մնացել էին Մարտիրոս եւ Գարաթիմ Կարապետեան եղբայրները, որոնցից առաջինը 22, իսկ երկրորդը 17 տարեկան էր: Գնած ժամանակ հեղեղը երկուսին վերցնում եւ տանում է: Լօյսը բացվելուն պէս, 28-ին, զոհերի դիակները գտնում են լճի ափին: Եղբիւրաւոր կենդանիների զոհեր չի եղել, որովհետեւ գիւղացիները, ինչպէս ասացինք, Միսակ էին նախօրօք տնիքից հեռացնել նրանց: Իր ձի միայն ընկնում է հեղեղի մէջ եւ խեղդվում:

Հետեւեալ օրը գիւղը եկաւ վնասը ցուցակաւ գրելու գաւառի պրիստավը: Առ այժմ վնասները հաշոււ են 10 հազար րուբլի: Այս մասին պ. Նանազապետեան զեկուցանելուց յետոյ, գիւղացիները պիտի խնդրաւատոյց լինեն՝ օժանդակութիւն ստանալու համար, որպէս զի կարողանան փոքր ինչ մեղմացնել վնասները: Սակայն ինչքան էլ որ լինի կառավարութեան հասցրած օգնութիւնը, բայց եւ այնպէս նա չի կարողանալ չօչափելի օգուտ հասցնել իր ժամանակին: Անհրճաւոր է կողմնակի օժանդակութիւն եւս:

Լ. Պետրոսեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, յուլիսի 20-ին
Всѣдствие сообщенія турецкаго императорскаго министерства иностранных дѣлъ, уведомляю васъ, что общественное спокойствие въ Турціи подъ верховнымъ владычествомъ его императорскаго величества султана, моего августѣйшаго владыки, не оставяющаго пожелать ничего лучшаго, поэтому, новости перенечатанныя вами въ уважаемомъ журналѣ «Мшакъ» въ №№ 138-омъ и 140-омъ, относительно разбоевъ въ Битлисскомъ вилаетѣ, совершенно вымышлены и безъ всякаго основанія, прошу васъ опровергнуть это въ одномъ изъ ближайшахъ номеровъ уважаемаго вашего журнала.

Турецкій генеральный консулъ въ Тифлисе
Zia

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՐ

Ռուսաց Տեխնիկական Ընկերութեան Կովկասեան բաժանմունքը տեղեկութիւն ստացաւ, որ նրան թոյլ է արված հրատարակել Թիֆլիսում մի ամսագիր «Инженерное Дѣло» անունով: Ամսագիրը կը հրատարակվի տարին չորս անգամ ինժեներ Մ. Կարպովիչի խմբագրութեամբ:

«Индуст. Листокъ» լրագիրը հաղորդում է, թէ Թիֆլիսում տեղի է ունենալու արծիստների համաժողով, որ կը բացվի օգոստոսի 19-ին եւ կը տեւէ 4 օր միայն, մինչեւ նոյն ամսի 22-ը:

Մի քանի անձինք խնդր էին տուել կառավարութեան թոյլտուութիւն ստանալու համար Թիֆլիս-Վաղիկաղիկական խնուրու վրա աւտօմոբիլներ բանեցնելու: Կառավարութիւնը, ինչպէս լուի են տեղական լրագիրները, մերժել է յիշեալ անձերի խնդրքը:

«Новое Время» լրագիրին հետադրում են Սեւասոպոլից, թէ այնտեղ սպասում են կոմս Լ. Ն. Տօլստոյի գալստեանը դէպի Խրիմի հարաւային ափերը: Տօլստոյ գալու է այնտեղ իր ընտանիքի հետ միասին: Տեղական հասարակութիւնը եւ կրթական հիմնարկութիւնների ներկայացուցիչները պատրաստութիւններ են տեսնում հանդիսաւոր ընդունելութիւն ցոյց տալու ուսու մեծ գրողին:

Արդարադատութեան միմտարութեան մէջ, ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագիրները, այժմ արդէն վերջացած է մի շարք խիստ կարեւոր հարցերի քննութիւնը: Ի միջի այլոց, լուծված են նոյնպէս հիւսիսային Կով-

ձին, սուլթանը յետ վերջերս իր խոստումները նաև արձանները եւ ծովափերը վերադարձնան մասին եւ վիճելի պարագայերի ու պահանջների վերաբերյալի մասին, այդ պատճառով ֆրանսիական զեպայանը տեղեկացրեց սուլթանին առաջին քարտուղարին, որ ինքը խզում է բոլոր լարաբերութիւնները օսմանեան կառավարութեան հետ:

ԿԱԼԻՇ: Երկարատեւ շքերից ու երաշտից յետոյ երէկ մորկախանն անձրեւ եկաւ, որ անպակն յնամանը հասցրեց մասակայ կալուածներին: Այսօր եղանակը սաստիկ ցրտեց եւ ձիւնախառն անձրեւ եկաւ:

ԿԱՄԵՆԿԱ: Մեծ Իշխան Սեւրգի Ալեքսանդրովիչ օգոստոսի 8-ին, առաւօտեան ժամի 9-ին, եկաւ 1-ն հետեւակ զօրաբանի շարժական զօրաժողովին, զիտեց զնորը արշաւանքի ժամանակ եւ ներկայ գտնվեց բրիգադայի զօրախաղերին:

ՊԵՆՉԱ: Հրկիզեալներին օգնելու համար մասնաժողով է կազմվում: Գաւառներից մեծ քանակութեամբ նպաստներ են ստացվում հասցով: Հաշից երեւում է, որ մի շարքովայ ընթացքում 12 հրկիզեալներից ոչնչացել են 338 անասնաբուծիչները աւելի քան երկու ու կէս միլիոն բուրլու արժողութեամբ: Այրված չէնքերի թւում գտնվում են տեխնիկական դպրոցը, երեք ծխական ուսումնարաններ, Ուլինսկու անուան նուիրված գրադարանը, Կաթնօրիկների եկեղեցին, քաղաքային դատաւորի դատաստանական սենեակը, երեք թաղային ստիկանատներ, երրորդ մասի հրկիզեալների կայարանը, քնարանային քառալիօնի զօրանոցը, ժողովրդական ճաշարանը եւ երեք արքունի օղեկրպակներ:

ԵԿԱՏԵՐԻՆՈՒԼԱ: Մնասկայան անուարական բանկի վարչութեան կալանաւորված անդամները՝ Կուրիլին եւ Բրազով արգելեցին բանտից, իւրաքանչիւրը 350,000 բուրլու երաշխաւոր ներկայացնելով: Վարչութեան երրորդ անդամը, Մակարով, որ փախել է, մինչեւ այժմ չէ գտնված:

Ց օգոստոսի

ՊԵՏԵՐՔՈՒՐԳ: Ներքին գործերի մինիստրը որոշեց՝ երեք ամսով արգելել «Ամյրսկի Կրայ» լրագրի համարների հատով վաճառումը:

ԲԻԼԵԱՆՍ: Օգոստոսի 8-ից Մեծ Իշխանուհի Գեորգինա Ալեքսանդրովնայի առողջութեան մասին, «Վերջին օրը Մեծ Իշխանուհու եւ Բարձր Նորածին Իշխան Դմիտրի Ալեքսանդրովիչի առողջութիւնը ամեն կողմից լիովին բաւարար էր»:

ԼՕՆԴՕՆ: «Times»-ում տպված է չինական լրագրողներին յանձնված արձանագրութիւնը: 1, 2, 3 եւ 4 յօդուածներում խօսվում է քաւիչ զեպայանութիւնների եւ այն պատժների մասին, որոնց արդէն ենթարկվել են բարձր պաշտօնեաները, 5-րդ յօդուածը պարունակում է մի արդիարակ, որի թւականը չէ գրված եւ որով արգելվում է զէնքի եւ ռազմամթերքի ներմուծումը երկու տարով, իսկ այնուհետեւ զարձեւել նոր ժամանակամիջոցով, եթէ հարկը պահանջի: 6-րդ յօդուածում ասված է, որ մայիսի 16-ի հրովարտակով Չինաստանը համաձայնեց, իբր վարձատրութիւն, վճարել 450 միլիոն ապէլ, որ, չիջուցման ծրագրով, պէտք է ծածկվի 39 տարվայ ընթացքում կիսամեայ վճարումներով 4% վրան հաշուելով: Իբր գրաւական արված են մաքսահարկերի աւելացումները, որոնք ստացվում են այդ հարկերի 50% բարձրանալուց, մէջը հաշուելով ներկայումս մաքսից ազատ ապրանքները, բացի բրնձից, օտարերկրեայ հացահատիկներից, ալիւրից եւ դրամատված ու չը դրամատված ոսկի ու արծաթից, իբր գրաւական են ծառայում նաեւ տեղական մաքսերը, որոնք բաց նաւահանգիստներում պէտք է գտնվեն կայսերական մաքսային իշխանութիւնների իրաւասութեան տակ, եւ աղի հարկից ստացվող եկամուտը, որ այլ եւս չէ ծառայում իբր գրաւական օտարերկրեայ փոխառութիւնների համար: Աւելացրած մաքսը կը սկի վերցվել արձանագրութիւնը ստորագրելուց երկու ամիս անցած: 7-րդ յօդուածը որոշում է պաշտպանման ընդունակ զեպայանական թաղի մակարդակը, ինչպէս նաեւ զեպայանութիւնների իրաւունքը՝ ունենալ մշակական զեպայանական պահպան զօրք: 8-րդ յօդուածով Չինաստանը համաձայնութիւն է տալիս քանդելու Տակուի մարտկոցները եւ ուրիշ մարտկոցներ, որոնք արդէլ են հանդիսանում Պեկինի եւ ծովի մէջ հաղորդակցութիւն պահպանելուն: 8-րդ յօդուածը պարունակում է այն իրաւունքը, որ արդէն յունվարի 3-ին Չինաստանը ստել է պետու-

թիւններին, այն է՝ Պեկինի եւ ծովի մէջ գրաւել այնպիսի կէտեր, որոնք անհրաժեշտ են ազատ հաղորդակցութիւն պահպանելու համար: 10-րդ յօդուածով Չինաստանը համաձայնում է այն բանին, որ երկու տարի շարունակ կախվեն ի տեղեկութիւն ժողովրդի՝ հրովարտակ, որով, մահվան պատժի սպանալիքով արգելվում է մասնակցել օտարազգիներին թշնամարար վերաբերվող որ եւ է ընկերութեան մէջ, հրովարտակ, որ թւում է արդէն գործ դրված պատժները, հրովարտակ, որով արգելվում են քննութիւնները, եւ, վերջապէս, հրովարտակ, որ նախազգուշացնում է, որ փոխարքանները եւ նախնազգայեանները պէտք է պաշտօնազուրկ անեն կարգի պահպանման համար պատասխանատու այն աստիճանաւորներին, որոնք մեղաւոր կը լինեն կարգը խանդարելու մէջ, եւ երբէք նրանց նորից պաշտօն չը տան: այդ հրովարտակները ներկայումս արդէն պատերից կայրած են Չինաստանում: 11-րդ յօդուածում ասված է, որ Չինաստանը պատրաստ է քննութեան ենթարկել աւելարական պայմանագրութեան փոփոխութիւնները, եւ 12-րդ յօդուածում, թէ յուլիսի 11-ի հրովարտակով ցրուցվի-համենը արտաքին գործերի մինիստրութիւն է դարձրած եւ թէ համաձայնութիւն է կայացել նաեւ օտարազգի զեպայանների ընդունելութեան վերաբերեալ պայտասական ցէրէժնիսի փոփոխութիւնների նկատմամբ:

ԼՕՆԴՕՆ: Հարաւային Աֆրիկայից արտաքուստ վերադարձները պահանջները քննող յանձնաժողովին ուս պահանջատերերի ներկայացուցիչ Գոլդբերգ յանձնեց նոր պահանջներ, յայտնելով, որ իրանց համար նշանակութիւն չունի, եթէ վարձատրութիւնը արվի նոյն իսկ իբր ողորմութիւն: Կան որոշ սկզբունքներ, որով ղեկավարվում են անկախ ազգութիւնները իրանց փոխադարձ յարաբերութիւնների մէջ: Այդ սկզբունքները վրա հիմնված իրաւունքի բաւարարութիւն տալու համար կարեւոր է միայն որոշել, թէ արդեօք աւելորդ իբր ու անարդար չէին արտաքուստները եւ ինչ յնամանք են կրել զանազան անձինք այդ արտաքուստներին: Գոլդբերգի ասելով, նրա բոլոր կիլիէաներին ձեռքալայել էին՝ մեղադրելով Բոքսթաթի դէմ եղած կարծեցեալ դաւադրութեանը մասնակցելու մէջ: Երանց արտաքուստ են մի ասիլ առաջ, 1900 թ-ի յուլիսին, եւ մինչեւ այժմ չեն ներկայացրած այնպիսի ապացոյցներ, թէ դաւադրութիւն իբր եղել է, որոնք արժանի լինէին ուշադրութեան:

ՊԵՆԿԻՆ: Մայրաքաղաքի յրճականերում երկուշաբթի առաջ աւազակների յարձակման ենթարկվեց եւ սպանվեց «Լյուդի» կառավարիչը, անմիջապէս միջոցներ ձեռք առնվեցին յանցաւորներին բռնելու եւ պատժելու:

ԲԻԼԵԱՆՍ: Հաղորդում են, որ երէկ երեկոյան չըջվել է զբաղմունքներով լի մի նաւակ: 15 հոգի խեղդվել են:

Եմքաղիք: ԱՆԷՊԱՆԻՐ ԳԱՍԵՆՔԱՐ Հրատարակչներ: ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ԵԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԻՈՐ ՀԻՒԱՆԿԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԳԵԱՆԻ

(Կուկիա, Վորոնցովի արձանի հանգէլ)

ա մ ե գ օ ր, բ ա ց ի կ ի ր ա կ ի օ ր Կ Ր Ի Գ:

Ա Ռ Ա Ռ Օ Ց Ն Ե Ր Ը

Բ. Ա. Նաւատարգեան—11—12 ժ. վրարուծութեան, վեներական (սֆիլիս) և միգաեա. հիւանդ.

Ե. Մ. Չիլովաճի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարային 5.

Կ. Ն. Գեղիլիով—12—1 ժ. սկանչի, քթի և կուրզի 5.

Զ. Բ. Բարաբաեանց—11—12 ժ. կանանց և երեխայից հիւանդ.

Ս. Պ. Կարապետեանց—1—1/2 ժ. ներքին և երեխայից 5.

Ե Ր Ե Կ Ո Ց Ն Ե Ր Ը

Ն. Ն. Ռոստամբեկով—6—7 ժ. վրարուծութեան և մորթու 5.

Ք. Բ. Գեղիլիով—7—8 ժ. սկանչի, քթի և կուրզի 5.

Բ. Ա. Նաւատարգեան—7 1/2—8 ժ. Վճար 50 կ. չբարտեքը ձրի համարտրդի (կոնսիլուսի) և օպիլացիայի համար առանձին:

Օ. Տ. Ասվաճիսկի—տանը, ծագկահաւ և բժշկական մարմնավարը. դիմել 11—1 ժ.:

Հիւանդանոցի վերատեսուչ

Բժօկապետ ՆԱԻԱՍԱՐԳԵԱՆ

Բ Օ Ս Տ Օ Վ Դ Օ Ն Ի Վ Բ Ա

ԵՐԴՈՒՅԱԼ ՀԱՒԱՍԱՐՄԱՏԱՐ

ԶԱՒԱԴ-ԲԵԿ ԲԱԼՈՒՂԵԱՆ

ՏԵՂԱՓՈՒՎԵԼ Է

ն օ ր ք ն ա կ ա ր ա ն

Большая Садовая, домъ Леонидова, № 40.

1—6

Ուսումնարանական վարչութեան թոյլտուութեամբ, ներկայ տարվայ օգոստոսի 10-ին, բացվում է

ՄԱՍՆԱԻՈՐ ԳՊՐՈՑ

Ս. Յ. ԻՒՋԲԱՅԵԱՆԻ

Նախագարաստեղու աշակերտներ պետական միջնակարգ դպրոցների օտորին դասարանների համար:

ԲԱԳՈՒ Հայոց փողոց, տ. Լազարեանների 6—10

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԱՐԱՄԵԱՆԻ

հ ր ա տ ա ր ա կ ա լ թ ե ա մ ր

չուտով լոյս են տեսնելու հետեւեալ պատկերազարդ հրատարակութիւնները՝

1) Գերհարգ Հաուպաման, 2) Բիերնշտիերնէ Բիերնասո, 3) Հենրիկ Իբսէն, 4) Հերման Զուդերման, 5) Ս. Սահակ, 6) Ս. Մեարոպ:

Իւրաքանչիւրի դիմը 5—10 կօպ.

Պատրաստվում են նոր կենսագրութիւններ:

Եղ. Թօփչեան 3—5

Ի. ԵԱ. ԲՐՕՆ-ՖՕՆ-ԲՐԷՆԵՐԻ

ՀԱՇԻԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻՑ

Նիկոլայեվսկայա, № 88.

Խնդրեցների ընդունելութիւն սկսված է: Պարագմունքների սկիզբը սեպտեմբերի 10-ին Դասընթացը բաժանված է կիսամակները: Պարագմունքները տեղի են ունենում ճաշից յետոյ՝ վճարը ամբողջ դասընթացի համար 60 բուրլի: Ընդունվում են երկու սեռի անձինք:

Ա Ռ Ա Ր Կ Ա Ն Ե Բ Ը Ե Ի Դ Ա Ս Ա Տ Ո Ի Ա Ն Ձ Ի Ն Ք.

1) Հաւապանութիւն } Ի. Եա. Բրոն-Ֆոն-Բրէնէր, դասարանների հիմնաւորը.

2) Բանկային գործ } ՎԻՐԵ.

3) Առեւտրական թուարանութիւն } Վ. Ս. Զէնգերի, լեռնային ինժեներ, պետական խորհրդական.

4) Թուարանութիւն հաշուարկով: } Վ. Ս. Մոսկալեով, պրոկուրորի օգնական, թ. ն. դ.

5) Տեխնոլոգիա } Վ. Ս. Մոսկալեով, պրոկուրորի օգնական, թ. ն. դ.

6) Ապրանքագիտութիւն } Վ. Ս. Մոսկալեով, պրոկուրորի օգնական, թ. ն. դ.

7) Թղթակցութիւն.

8) Առեւտրական օրէնքներ } Վ. Ս. Մոսկալեով, պրոկուրորի օգնական, թ. ն. դ.

9) Առեւտր.

10) Գեղադրութիւն—Գ. Եա. Դիւկով, ինժեներ-երկրաչափ.

Ո չ - պ ար տ ա ղ ի ր ա ու ար կ ա ն ե ր

1) Պրանտիական լեզու—Է. Կ. Լիօզեկ, դաս. 2-րդ կլասիկ, գիմնազիայի.

2) Գերմանական լեզու—Ի. Ֆ. Գրոմիլի, դաս. Թիֆլի. ռեալական ուսումնարանի.

3) Մազարութիւն, Ի. Եա. Բրոն-Ֆոն-Բրէնէր.

4) Ուսուցումն զրկու գրող մեքենայով, նաեւ կողմնակի անձանց համար:

Մինչեւ օգոստոսի 10-ը խնդրեցները ընդունվում են դասարանների հիմնադրի ժող նրա բնակարանում, Միխայլովի պրօպագէտ, № 71, իսկ յետոյ դասարանների գիււնատանը, Նիկոլայեվսկայա, № 88.

16—20

Լ Ո Ս Տ Ե Ս Ա Ի

Լ Է Օ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԵՐ ԿԵԱԼԲԸ, ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԱՆՅԵԱԼՈՒՄ

Հատոր առաջին—XVI—XVII դար

Գինն է 1 ՐՈՒՐԻ 50 ԿՕՊԷԿ

Ծախվում է Թիֆլիսում, «Մշակի» խմբագրատանը.

Օտարաքաղաքայինները դիմում են. Тифлисъ, редакция «Мшакъ».

Ֆիլանսների մինիստրի թոյլտուրեաւք

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

(Баку, Прачешная, домъ Теръ-Ованесова)

Կուրսերի նպատակն է տալ ունկնդիրներին մասնագիտական-առեւտրական կրթութիւն եւ պատրաստել հմուտ հաշուպահներ: Աւարտողները ստանում են ա տ ա ե օ տ ա տ ն ե ր: Կուրսերում աւանդվում են՝ 1) Առեւտրական թուարանութիւն եւ թուարանութիւն համարչի վրա. 2) Հաշուպահութիւն՝ արդիւնաբերական-գործարանական, առեւտրական եւ բանկային. 3) Առեւտրական թղթակցութիւն. 4) Առեւտրական անտեագիտութիւն. 5) Առեւտրական եւ մուրհակային օրէնքներ. 6) Գեղադրութիւն եւ արագագրութիւն (ուղղումն ձեռագրի):

Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից ամեն օր՝ կուրսերում եւ Եղբ. Մովսիսեանի եւ ընկ. ԲԱԳՈՒԻ բաժանմունքում: Կուրսերի կանոնադրութիւնը (уставъ) եւ մանրամասն ծրագիրը—արվում եւ ուղարկվում են ձրիաբար: Օտարաքաղաքայինները դիմում են՝ ВАНУ, учредителю коммерческихъ курсовъ А. И. Теръ-Каспарову. (Ե. շ.)

14—25

Յ Է Ն Ջ Ա Ի Ո Ր

Ներքինանաւարտ ուսուցիչ կամենում է աւանդել հայոց, ուսաց լեզու, թուարանութիւն, երգեցողութիւն. կառավարում է եկեղեցական խումբ:

Դիմել՝ Кашиневъ. Гостиница «Кавказъ», Артуху Ордуяну.

1—3

Կ. Մ. ԿԷՕՆՃԵԱՆ

Ընդունում է բերանի եւ առամների հիւանդութիւններ ունեցողներին: Եփնում է արուեստական առամներ, քիթ, քիթ (обтуратор) եւ վերին ու ստորին անդամաւորված ծնօտների պրոթեզներ (резекционные протезы).

Առաւօտեան 8—2 ժամ.

Երեկոյեան 5—8 »

Հասցէն՝ Պուշկինսկայա փողոց, № 16.

16—25

ԲՈՃԿ. ՎԱՀՆ ՆՐՃՐՈՒՆՈՒ

աշխատութիւններից ձեռք բերելու համար՝ այսուհետեւ պէտք է դիմել. Тифлисъ. Книжный магазинъ «Гуттенбергъ» (Лорисъ-Мелковская, № 11), Г. Галустьяну. Նոյն տեղը վաճառվում են զանազան գրքեր: Ամեն մի նոր լոյս տեսած գիրք ցանկացողներին կարող ենք ուղարկել:

Անվերջեան ԳԷՈՐԳԻ

ՍԱՅԵԱԹՆՈՎԱՅ

աշխատասիրութիւնը, 172 երես:

Գինն է 50 ԿՕՊ.

Ծախվում է Թիֆլիսի Կենտրոնական գրաւաճառանոցում:

9—10